ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 09.03.2022թ.),

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կ. Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 09.03.2022թ.),

քննելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի կողմից 04.03.2022թ. ներկայացված (07.03.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 04.03.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարվել է ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16 ծածկագրով ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ ավտոպահեստամասերի գնման ընթացակարգ: Ընթացակարգի հրավերի հավելված 1-ում թվով 341 անուն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանք խմբավորել է մեկ չափաբաժնում որով էլ կոպիտ կերպով խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նաան խմբավորման անհրաժեշտությունը:

Հարկ եմ համարում նշել, որ պատվիրատուն նախընթաց տարիներին նույն ապրանքները գնել է դրանք չխմբավորելով մեկ չափաբնաժնում:

Ապրանքների խմբավորումը արհեստականորեն սահմանափակում է հնարավոր մասնակցիների շրջանակը, որն էլ հստակ կերպով համարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի խախտում: Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ որոշում կայացնել հրավերի տեքստը փոփոխելու և գնվելիք ապրանքները առանձին չափաբաժիններում տրոհելու մասին»:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Վերստին ուսումնասիրելով ԳՐՔԱ-ՆԳ-2022/22 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին պատվիրատուի ներկայացուցչի խոսքը ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16 ծածկագրով բաց մրցույթի հրավերում չափաբաժինները խմբավորելու մասին հիմնավորումները այն մասին, որ դա արվել է նախորդ տարիների փորձառությունը հաշվի առնելով, երբ որոշ չափաբաժինները, ի մասնավորի ընդհանուր հայտարարված մրցույթների երսուն տոկոսը չկայացած է հայտարարվել այդ ընթացակարգերին մասնակիցների կողմից հայտ չներկայացնելու պատճառով: Ուսումնասիրելով պատվիրատուի կողմից 2021թ-ին հայտարարած թվով վեց ավտոպահեստամասերի գնման ընթացակարգերը, որոնք բաժանված են եղել 295 չափաբաժիններում դրանցից չկայացած է հայտարարվել ընդամենը 38-ը, որից 32-ը չկայացած է հայտարարվել «Գնումներ մասին»

ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի հատկանիշներով. Այն է՝ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական հատկացումները և թվով 6 չափաբաժին միայն չկայացած է հայտարարվել նույն հոդվածի 1-ին մասի երրորդ կետի հատկանիշներով, երբ ոչ մի հայտ չի ներկայացվել: Հայտ չներկայացնելու պատճառով չկայացած չափաբաժինների տեսակարար կշիռը ընդամենը 2 տոկոս է, այլ ոչ թե 30, եթե դիտարկենք բոլոր չկայացած չափաբաժինները դրանց տեսակարար կշիռը դարձյալ 30 տոկոս չէ: Հարկ է նշել որ չկայացած չափաբաժինների մեծ մասը պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման շուկայի սխալ ուսումնասիրության արդյունք է: Այսինքն պատվիրատուի ներկայացուցչի հիմնավորումը, այն մասին որ չափաբաժինների խմբավորումը արվում է նրա համար որովհետև առանձին չափաբաժիններով հայտարարելու դեպքում 30 տոկոսի չափով հայտեր չեն ներկայացվում անհիմն է և չի համապատասխանում իրականությանը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.03.2022թ թիվ ԵԱ 227-ել գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 25.02.2022թ.-ին հայտարարված ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի (այսուհետ՝ Պահեստամասեր) ձեռքբերման «ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16» ծածկագրով բաց մրցույթի շրջանակում «Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի կողմից 04.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 բողոքի քննության նպատակով 10.03.2022թ.-ին 09:30-ին հրավիրված նիստին վերջինիս ներկայացուցչի կողմից հնչեցված մեղադրանքների մասով ներկայանում ենք հետևյալ հակափաստարկները.

2020թ. մայիսի 11-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11 ծածկագրով գնման ընթացկարգի հրավեր՝ թվով 312 չափաբաժին, որից 257-ը (շուրջ 82,37%) հայտարարվել են չկայացած: Կայացած 55

չափաբաժինների մասով ապրանքները մատակարարվել են պայմանագրով սահմանված ժամկետների զգալի խախտմամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակահատվածում ինչպես մեր երկրում, այնպես էլ ապրանք ներմուծող երկրներում հայտարարված արտակարգ դրությամբ:

2021թ. մարտի 10-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 44 չափաբաժին, որից 22-ը (50%) հայտարարվել են չկայացած: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը հետևյալն է. Պատվիրաուի և Սենտրալ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/3-1 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 133 օրով, Պատվիրատուի և Ար Էնդ Սուր ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/3-4 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 115 օրով:

2021թ. մարտի 25-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 71 չափաբաժին: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը հետևյալն է. Պատվիրաուի և Սենտրալ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/4-1 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 141 օրով, Պատվիրաուի և ՕՊՏԻՊԱՐՏ-ԱՄ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/4-3 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 59 օրով:

2021թ. մայիսի 5-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 53 չափաբաժին: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը հետևյալն է. Պատվիրաուի և ՕՊՏԻՊԱՐՏ-ԱՄ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/5-1 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 38 օրով:

2021թ. հունիսի 6-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 61 չափաբաժին: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը

հետևյալն է. Պատվիրաուի և Սենտրալ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/7-1 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 77 օրով, Պատվիրաուի և Լանիգերա ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/7-2 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 43 օրով, Պատվիրաուի և ՕՊՏԻՊԱՐՏ-ԱՄ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/7-4 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 75 օրով:

2021թ. հունիսի 11-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 24 չափաբաժին: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը հետևյալն է. Պատվիրաուի և Դրայվ-Կոդ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8-3 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 46 օրով, Պատվիրաուի և Սենտրալ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8-4 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները 30 օրացուցային օրով երկարաձգելուց հետո խախտվել են մինչև 40 օրով:

2021թ. հունիսի 11-ին Պատվիրատուի կողմից հրապարակվել է Պահեստամասերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր՝ թվով 42 չափաբաժին: Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասով պատկերը հետևյալն է. Պատվիրաուի և Սենտրալ ՍՊԸ-ի միջև կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/12-2 պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները խախտվել են մինչև 34 օրով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հաշվի առնելով վերոգրյալը և Պատվիրատուի աշխատանքի առանձնահատկությունները, տվյալ պահի դրությամբ Երևան քաղաքում ունենք շուրջ 30% չգործածվող տեխնիկա»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով մասնավորապես հայտնել է վերը նշված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են ստորև ներկայացված չափաբաժնում /չափաբաժիններում/՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասեր

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

3. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, մասնավորպես սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	**Գնման առարկայի անվանումը**	**Հ/Մ**	**Պայմանագրի կատարման առավելագույն գումար**
1	ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասեր	դրամ	250 000 000

4. Հավելված 1-ին կից Հավելված 1.1-ի համաձայն՝ մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորված են 341 անուն տարբեր բնութագրեր ունեցող ավտոպահեստամասեր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի 04.03.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 23.03.2022թ թիվ ԵԱ 227-ել դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. ***Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:***

Այսպես՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են ստորև ներկայացված չափաբաժնում /չափաբաժիններում/՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասեր

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, մասնավորապես սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	**Գնման առարկայի անվանումը**	**Չ/Մ**	**Պայմանագրի կատարման առավելագույն գումար**
1	ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասեր	դրամ	2500 000

Հավելված 1-ին կից Հավելված 1.1-ի համաձայն՝ մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորված են 341 անուն տարբեր բնութագրեր ունեցող ավտոպահեստամասեր:

Այսպիսով՝ ուսումնասիրելով բողոքով վիճարկվող փաստը, Պատվիրատուի կողմից ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև Ընթացակարգի հրավերը, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

<u>Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն</u>՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

<u>Հայտի ապահովումը</u> ներկայացվում է բանկային երաշխիքի (Հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը ***<u>հավասար է պայմանագրի գնի</u>*** հինգ տոկոսին (12 500 000 ՀՀ դրամ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 10-րդ կետի 10.1 ենթակետի համաձայն՝ Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

Նույն կետի 10.2 ենթակետի համաձայն՝ ***<u>որակավորման ապահովման չափը հավասար է պայմանագրի գնի</u>*** 30 տոկոսին (75000000 ՀՀ դրամ):...

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ ***եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի***, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ***որակավորման ապահովման չափը հավասար է <u>ընտրված մասնակցի գնային առաջարկի</u>*** տասնհինգ, իսկ ***գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին***.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: ***<u>Ընդ որում, հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին</u>***, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է հայտի և որակավորման ապահովումների ներկայացման Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ և նույն կետի 9-րդ ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջները, քանի որ վկայակոչված իրավական կարգավորումների համաձայն՝ որակավորման և հայտի ապահովման չափերը հաշվարկվում և ներկայացվում են մասնակցի գնային առաջարկի նկատմամբ, մինչդեռ՝ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերով սահմանել է, որ հայտի ապահովման չափը հավասար է պայմանագրի գնի հինգ տոկոսին, իսկ որակավորման ապահովման չափը՝ պայմանագրի գնի երեսուն տոկոսին:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Պատվիրատուն պետք է Ընթացակարգի հրավերում հայտի և որակավորման ապահովումների ներկայացման պահանջի մասով կատարի փոփոխություն՝ համապատասխանեցնելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ և նույն կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջներին, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ եթե Ընթացակարգի հրավերով հայտի և որակավորման ապահովումների ներկայացման պահանջի նման ձևով սահմանելը պայմանավորված է 341 ապրանքատեսակների մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկայի խմբավորմամբ,

ապա գտնում եմ, որ նման պայմաններում Պատվիրատուն պետք է նաև գնման ենթակա ավտոպահեստամասերը սահմանի առանձին չափաբաժիններով՝ Ընթացակարգի հրավերում կատարելով համապատասխան փոփոխություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հայենդ Սլուշնս» ՍՊԸ-ի կողմից 04.03.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել Պատվիրատուին սույն որոշման հիմնավորման շրջանակներում «ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16» ծածկագրով բաց մրցույթի հրավերում կատարել փոփոխություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**